

602

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Խ 27

Օ Տ Ա Ր

ՀԻՔԻԱԹՆԵՐ

I

Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1. ԱՆԳԻՆ ՔԱՐԸ
2. ԿԱԽԱՐԴԻ ՔՍԱԿԸ
3. ՈՐՈՏ ԹԱԳԱՆՈՐԸ

○○○○○○○○

8
0-78

ԹԻՖԼԻՉ
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1916

19 MAY 2005

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 27

08 OCT 2009


8
Ս-78

ստ

Օ Տ Ա Ր

Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր

I



Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Հ. 2591

- 1. ԱՆԳԻՆ ՔԱՐԸ
- 2. ԿԱԽԱՐԴԻ ՔՍԱԿԸ
- 3. ՈՐՈՏ ԹԱԳԱԽՈՐԸ

○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Տպարան Ն. Աղանեսանի, Պոլից. 7
1916

ԱՆԳԻՆ ՔԱՐԸ

Մի ամառուայ շոք օր էր. բայց չը նայած անտանելի շոքին ու թէժ արեին, Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով: Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը փառաւոր յաղթութիւնից յետոյ պէտք է վերադառնար իր մայրաքաղաքը: Աղքատ ժողովուրդը հաւաքւել էր թաժաշա անելու: Մարդիկ անհամբեր սպասում ու գովում էին թագաւորին. փառաբանում էին նրա քաջութիւնը, խելքը, մեծահոգութիւնը, իմաստութիւնը, արդարադատութիւնը և շատ ուրիշ բարձր առաքինութիւնները:

Էս ժամանակ բազմութեան միջից դուրս եկաւ Սայիդ անունով մի աղքատ ու սկսեց ամենախիստ խօսքերով հայհոյել թագաւորին:

Ամբոխը սաստիկ վրդովւեց. չորս կողմից վրայ դառան, որ ոտնատակ տան Սայիդին, երբ մէջ մտաւ մի անծանօթ:

— Կանգնեցէք, ասաւ, հմ ազնիւ մարդիկ, ու ձեր ուշադրութեան ահանջները մի առժամանակ կախ արէք իմ մըտքի ճիւղերին:

Ամբոխը կանգ առաւ:

— Ի՞նչ լաւ է խօսում, է, ձէն տւեց մինը. խօսիր, խօսիր, լսում ենք:

— Դուք ուզում էք սրան ծեծէք, հարցրեց անծանօթը:

— Հա, անպատճառ պէտք է ծեծենք:

— Բայց պէտք է խելօք ծեծէք:

— Ի՞նչպէս թէ խելօք ծեծէք... էլ խելօք ծեծելը ռն է...

Կողքերը կը փշրենք — պրծաւ գնաց:

—Ձէ, էդպէս չի. սպասեցէք ու ինձ ականջ արէք: Դուք ուզում էք սրա կողքերը փշրէք: Շատ լաւ: Ասենք թէ տեղն է ու արդարացի: Բայց կարող է պատահել, որ հարկաւոր է սրա երկու կողքը փշրել, իսկ դուք միայն մի կողքը կը փշրէք: Էդպէսով էլ կը վարւէք և անարդար, և անխելք:

—Լաւ ես ասում, ես իմ Աստուածը, ձէն տւին ամեն կողմից: Հապա ի՞նչ անենք. ներէնք էն վիրաւորանքը, որ սա հասցրել է մեր ամենախմաստուն, ամենագերագոյն, ամենահեռատես, ամենասրատես թագաւորին, աշխարհքի կենդրոնին, Աստուծոյ սուերին, աստղերի աստղին, արեգակների արեգակին...

—Ձէ, ես հօ չեմ ասում՝ ներենք, ես ասում եմ՝ մի հարցնենք ու լսենք, թէ ինչ է ասում էս մարդը, ինչպէս է արդարանում:

—Ես արդարանալու բան չունեմ, խօսեց Սայիդը: Մեղաւորներն են արդարանում. իսկ ես ոչ մի մեղք չեմ արել: Ես միայն էն պէտք է ասեմ, ինչ որ ինձ են արել: Եւ ասեմ թէ չէ, դուք ձեռքերով կը ծածկէք ձեր երեսները, բայց էդ էլ չէք կարող անել, որովհետեւ ձեր երեսների ամօթից ու բարկութեան տաքութիւնից ձեր ձեռքերը կ'էրւեն:

—Վահ, էս ի՞նչ է պատահել: Ինչպէս երևում է շատ հետաքրքրական բան պէտք է լինի: Պատմիր, պատմիր, զոռացին ամեն կողմից:

—Ոչ թէ հետաքրքրական, այլ մի ցաւալի ու անիրաւ գործ, — պատասխանեց Սայիդը: Ականջ արէք, պատմեմ տեսէք:

—«Ես մի գեղեցիկ, խելօք ու աշխատասէր կին ունէի ու երկու կարմրաթշիկ, առողջ, աշխոյժ երեխայ: Ինձ համար երջանիկ ապրում էի, ու իսկի Մարգարէի խոստացած դրախտն էլ չէր պէտքս...

—Տեսէք, տեսէք՝ ինչեր է հաջոււմ: Այ լիրբ հայհոյիչ... Հէնց դրա համար էլ էդ բախտին ես արժանացել... — Ընդհատեց մէկը:

—Բախտը որ կայ՝ ծնւելիս է գրւում մարդու ճակատին. նրանից պրծնում չը կայ, — մէջ մտաւ մի ուրիշը:

—Դէ լաւ, խելքներդ զօռ մի տաք, թող արէք պատմի: Ու Սայիդը շարունակեց.

«Քանի տարի էսպէս ապրեցինք, ամեն մի տարին, ամեն մի ամիսը, շաբաթը, օրը, ժամն ու վայրկեանը անցան լիքը երջանկութիւններով: Բայց չար նախանձը, որ աշխարհքում կործանում է ամեն բան, վերջը իմ երջանկութիւնն էլ կործանեց: Իմ կողքին ապրում էր մեր քաղաքի դատաւոր Իբրահիմը: Նախանձեց իմ բախտին, կնոջս ու երեխաներիս խելեց ինձանից: Կնոջս իրեն հարձ առաւ, երեխաներիս ստրուկ տւեց ուրիշներին: Ու էսպէս նրանք ընկան կրկնակի գերութեան մէջ: Գերի մօր սիրտը իր երեխաների մօտ էր ու նրանց հետ էլ կրկնակի գերի. երեխաների ուշքն ու միտքն էլ իրենց մօր մօտ էր ու նրա հետ կրկնակի գերի...

—Այ էդ լաւն էր: Ի՞նչ սիրուն ասիր — կրկնակի գերի...

«Էսպէս մնացի մենակ ու կեանքը մահից էլ աւելի անտանելի դարձաւ ինձ համար:

«Եւ ահա տեսնում էք, անտուն, անտեղ թափառում եմ, ու չեմ իմանում՝ աշխարհքում էլ ինչ է մնում ինձ համար»: Ամենքի սիրտը շարժւեց:

—Էլ երկար ու բարակ մտածելու ի՞նչ կայ էստեղ. հրէս թագաւորը դալիս է, գնա գանգատ արա, էլի, — խորհուրդ տւեց աղքատներից մինը:

—Գանգատ արա... լաւ ես ասում. բայց թագաւորը շրջապատւած կը լինի իրեն մօտիկների ու մեծամեծների էն տեսակ բազմութիւնով, որ արի ու մօտեցիր: Հա, կը մօտենան հարուստները, բայց ես ի՞նչպէս մօտենամ: Դուք ասում էք նա մեզ համար արեգակ է, բայց արեգակի նման էլ հեռու է մեզանից:

—Վախիլ մի, սիրտ տւին միւս աղքատները. մենք կը մօտենանք: Ինքն էլ էնպէս բնաւորութիւն չունի, ամենքին

մօտ է թողնում: Ոչ մի աղքատ դեռ նրա շէմքից ետ չի դառել առանց բարերարելու:

Էս խօսքումն էին, որ ամբոխը տակնուվրայ եղաւ, ալեկոծւեց, ամեն մարդ տեղ բռնեց ու ամենքի աչքերը դարձան դէպի քաղաքի դարպասները տանող գլխաւոր փողոցը: Վերջապէս երեաց արքայական թափօրը: Ահա և Հարուն Ալ Ռաշիդն ինքը իր ճոխ ու փայլուն շքախմբով: Թափօրը կանգ առաւ գլխաւոր հրապարակում, պալատի առջև: Թագաւորը ձիուց իջաւ, բազմեց մեծամեծներով շրջապատւած ամպհովանու տակ դրած գահին ու իրաւունք տւեց որ ցանկացողները ներկայանան իրեն: Առաջ եկան նշանաւոր հարուստները—թանկագին նւէրներ տւին: Առաջ եկան վաճառականները—ծանրագին շալեր, մետաքսի ու կերպասի կտորներ տւին: Առաջ եկան արհեստաւորները—սքանչելի նուրբ բանւածքներ ու ձեռագործներ տւին: Թագաւորն ուրախ ու գոհ ընդունեց ամենքին ու ամեն մէկին մի որևէ քաղցր խօսք ասաւ: Մին էլ յանկարծ ամբոխի միջից մի պատահուտւած, հիւժւած աղքատ դուրս եկաւ, գլխին մի ահագին քար, ու մօտեցաւ թագաւորին:

—Թագաւորն ապրած կենայ, ահա էս էլ իմ նւէրը:

Թագաւորը դարմացաւ, մթնեց ու խստութեամբ հարցրեց.

—Էս ի՞նչ կը նշանակի... Էս ի՞նչ ես տալիս դու ինձ...

—Թագաւորն ապրած կենայ,—պատասխանեց աղքատը,—

թագաւորին նւէր տուողը պէտք է որ սրտիցը տայ. իմ սրտումն էլ էս քարն է ծանրացած, ես էլ էս եմ քեզ նւիրում:

Թագաւորը ժպտաց, ապա թէ մտքի տունն ընկաւ:

—Անունդ ի՞նչ է:

—Երբ դեռ երեխայ էի՝ հէրս ու մէրս ինձ ասում էին Ջան Սայիդ: Երբ հասակ առայ, հարեաններս ասում էին Աշխատասէր Սայիդ: Երբ ամուսնացայ՝ կինս ասում էր Լաւ Սայիդ. ծանօթներս ու բարեկամներս ասում էին Ազնիւ Սայիդ. իսկ այժմ ասում են—խեղճ, ահալտ, Աղքատ Սայիդ:

—Ո՞րտեղ ես ապրում:

—Էնտեղ, որտեղ թռչուններն են թռչում, որտեղ քամին է սուլում:



—Դէ, լաւ,—խօսեց Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը.— իմ տէրութեան մէջ ոչ մի չար գործ չի խուսափիլ իմ հայեացքից՝ որ անդնդում կուզի թագնւի: Գնա՛ աղօթիր Աստծուն. ո՛վ գիտի, գուցէ մի օր էլ գայ, որ քեզ ասեն Բախտաւոր Սայիդ:

Սայիդը գնաց:

Էս դէպքի վրայ մի քանի օր անց կացաւ: Հարուն Ալ

Ռաշիդը մանրամասն իմացաւ Սայիդի պատմութիւնը, համոզւեց ճշմարտութեանը ու կամեցաւ դատել արդարն ու մեղաւորը:

Մի օր էլ խնջոյքի հրաւիրեց, հաւաքեց իր բոլոր մեծամեծներին: Մեծամեծներն եկան հաւաքւեցին մարմար աւազաններով ու շադրևաններով լիքն այգիները, ծաղիկներով մէջ ծառերի տակին խալիչաների վրայ բազմեցին, սկսեցին դալիան քաշել, ուտել, խմել, քէֆ ու զրոյց անել:

Քէֆի թունդ ժամանակը թագաւորը հրամայեց հրաւիրեն իր հէքիաթախօսին, որ յայտնի էր իր շիտակ ու անկեղծ բնաւորութեամբ: Հէքիաթախօսն եկաւ, բարեւ տւեց, բարեւ առաւ, նստեց, սկսեց դալիան ծխել ու պատմութիւն անել:

— «Աշխարհքում շատ գանձեր կան, ասաւ նա, բայց ամենաթանգ գանձը լաւ անունն է: Լաւ անունով մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազար ու մի մարդու սրտում: Լաւ անունով մարդը էնպէս տեղեր է հասնում, որ չի կարող հասնել, ոչ ձիով, ոչ ուղտով, և ոչ ուրիշ միջոցով: Լաւ անունով մարդը չի մեռնում: Նա մահից յետոյ էլ անտեսանելի ապրում է մեր միջում, ինչպէս ոգի: Միշտ մեր միտն է գալիս, մեր սիրտն է հոսում իր գեղեցիկ յատկութիւնները: Լաւ բան է լաւ անունը:

«Մի գանձ էլ կայ—հարստութիւնն է:

«Հարստութիւնով մարդ հազար ձեռն է ունենում, հազար ոտը, հազար լեզու և հազար ձեռով կարող է հազար լաւ գործ կատարել: Լաւ բան է հարստութիւնը:

«Մի գանձ էլ կայ—էդ էլ խելքն է:

«Խելքով մարդը գերմարդ է դառնում: Խելքով՝ տկարն ուժեղ է, աղքատը—հարուստ, վախկոտը—անահ: Նրանից է, որ անլսելի շնջիւնով ասած խօսքը որոտում է ու անցնում աշխարհքի մի ծէրից միւս ծէրը: Լաւ բան է խելքը:

«Բայց մի գանձ էլ կայ, որ լաւ անունից էլ, հարստութիւնից էլ, խելքից էլ վեր է: Առանց նրան էս բոլորը համարեա թէ սարսափելի ու կործանարար կը լինէին մարդու

համար: Առանց նրան աշխարհքը կը թառամէր ու կամայանար: Էս գանձը—խղճատանքն է:

«Էս գանձը արդէն մեծ մարդիկն են ունենում, և սրա համար էլ նրանք, ինչ էլ որ ունենան, երջանիկ չեն լինում: Ինչքան հարստութիւն մտքովդ կանցնի, տուր նրանց, որ նրանք բաժանեն մարդկանց ու բարերարեն, դարձեալ քիչ է նրանց համար: Իսկ ես ճանաչում էի մի աղքատի, որ երեք գանձ ունէր և իրեն համարում էր երջանիկ ու շարունակ փառաբանում էր Աստծուն: Եւ հպարտութիւնը մտաւ նրա սիրտը, թէ ինքն էր ձեռք բերել էն երջանկութիւնը ու ոչ ոք էլ չէր կարող խել իր ձեռքից: Էս բանն իմացաւ շար ոգին ու հասցրեց Աստծուն: Աստուած անիծեց չար ոգուն ու իրենից ետ մղեց, զրեց էդ երջանիկ մարդու ապրած քաղաքի դատաւորի սիրտը: Դատաւորը յանկարծ զգաց որ, իր ներսը մի նոր, անծանօթ ու թունաւոր բան է շարժւում: Սրտի մէջ սկսեց եռալ մի շարութիւն ու միտքը մթնեց խաւար մշուշից: Ինքն էլ լաւ չիմացաւ թէ ինչ էր պատահել իրեն, վեր կացաւ դուրս եկաւ որ հովին տայ իրեն, ու երջանիկ աղքատի տան մօտից անցնելիս սկսեց նրան նախաձեռնել: Բայց ինչ էր աղքատի ունեցած չունեցած գանձն ու երջանկութիւնը: Մի ջրհոր, երկու արմաւենի ծառ: Զրհորից սառը ջուր էր խմում, իսկ երկու արմաւենին ամբողջ տարին նրան քաղցր պտուղ էին տալիս ու հով ստւեր: Սառը ջուրը խմում էր, քաղցր պտուղն ուտում ու շաքում նրստում փառաբանում Աստծուն: Դատաւորին շատ թւացին էս գանձերը աղքատի համար, վճռեց նրանից խլի, ու խլեց: Էն օրւանից աղքատը թափառում է դռնից դուռը, նրա հառաչանքից խաւարում են աստղերը, նրա թափած արտասուքներից կարիճներ են ծնւում ու աշխարհքը լցւում»:

Ամենքի սիրտն էլ խորը շարժւեց էս պատմութիւնից, ամենքն էլ զայրացան անիրաւ դատաւորի վրա, ամենքն էլ գտան, որ նա արժանի է խիստ պատժի:

— Իսկ դ՞ու ինչ ես ասում, Իբրահիմ, հարցրեց Հարուն Ալ

Ռաշիդ թագաւորը իր մեծամեծներէից մէկին, Բաղդադի դատաւորին: Ի՞նչ պէտք է անել յապշտակող դատաւորին:

— Թագաւորն ապրած կենայ, — պատասխանեց Իբրահիմը, էդ մի էն տեսակ ոճիր է, որին արժանի պատիժ ես գտնել չեմ կարողանում:

— Իբրահիմ, գոչեց թագաւորը, էդ ոճրագործը դու ես: Դու ես աղքատ Սայիդից խլել նրա կինը, էդ երջանկութեան աղբիւրը մեր կեանքում: Դու ես խլել նրա դաւակները, որ մարդկանց կեանքի քաղցր պտուղներ են ու իրենց ծնողներին շաք են անում ծերութեան օրերում:

Իբրահիմը խորտակեց, գետին ընկաւ ու խնդրեց, որ իրեն ների թագաւորը:

— Ես չեմ քո դատաւորը, խօսեց Հարուն Ալ Ռաշիդը. քո դատաւորն այժմ նա է, ում որ թշուառացրել ես դու:

Ու հրամայեց ներս կանչեն Սայիդին:

— Սայիդ, ասաւ, ահա քո ձեռքն եմ տալիս քո թշնամուն:

— Թագաւորն ապրած կենայ, իմ ձեռքն ես տալիս, ես ի՞նչ անեմ, պատասխանեց Սայիդը:

— Հապա ի՞նչ ես ուզում:

— Ես դրանից բան չեմ ուզում: Թող իմ կնոջն ու երեխաներին վերադարձնի, ես առաջւայ նման երջանիկ կը լինեմ:

Էս մեծահոգութիւնը շարժեց թագաւորին, նրա աչքերը լցւեցին արտասուքով: Բոլոր մեծամեծներն էլ սկսեցին արտասուել:


— Հաւ, էդ քո դատաստանը, — դարձաւ թագաւորը Սայիդին, — այժմ իմ դատաստանը լսիր: Դու, Իբրահիմ, քո կալաժքների չորս բաժնից երեք բաժինը կը տաս Սայիդին, դրա հետ էլ էն քարը, որ Սայիդն, ինձ պարզէ բերեց, էն քարի քաշով մին ոսկի:

Թագաւորի վճիռը վճիռ էր: Ինչ որ վճռեց՝ Իբրահիմը տւեց Սայիդին: Ու Սայիդը իր կնոջ ու երեխաների հետ միասին ստացաւ ահագին հարստութիւն: Բայց հարստութիւն

նից չը գոռոզացաւ Սայիդը: Դարձեալ առաջւայ նման համեստ կեանք էր վարում ու աշխատում էր առաւօտից մինչև իրիկուն: Երբ ընկերները հարցնում էին՝ թէ ինչո՞ւ չես օգտւում քո հարստութիւնից ու փարթամ ապրում, ասում էր՝ հարստութիւնը փչացնում է մարդու սիրտը, խնջոյքներ ու ճոխ ճաշերը յոգնեցնում, մաշում են մարդու զգացմունքերը, իսկ ես ուզում եմ մնամ միշտ թարմ ու բարի:

Ու իր ամբողջ կարողութիւնը Սայիդը սպառեց, դրեց բարի գործերի վրա: Ուսումնարաններ բաց արաւ, հիւանդանոցներ շինեց, ջրհորներ փորել տւեց անջուր անապատներում ու ամեն մի ջրհորի քարի վրա արձանագրել տւեց. «Ո՛վ մարդ, խմիր ու յիշիր նրանց, որոնք ծարաւից տանջւում են աշխարհքում»:

Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը Սայիդի նւիրած քարը Անգին քար անւանեց ու ամեն անգամ, դատաստան տեսնելիս, դնում էր սեղանին, իր առջևը, էնպէս էր դատաստան տեսնում: Աւանդութիւնն ասում է՝ թէ նրա նման էին վարւում նրա յաջորդները՝ արաբական միւս թագաւորները, (մինչև թուրքերի գալը: Թուրքերի գալուց յետոյ անհետացաւ, կորաւ էն Անգին քարը, որ աշխարհքի հզօրներին յիշեցնում էր արդարութիւնն ու խղճմտանքը):



ԿԱԽԱՐԴԻ ՔՍԱԿԸ

Լինում են, չեն լինում, լինում են մի պառաւ մարդ ու կնիկ, ունենում են երեք աղջիկ։ Օրերից մի օր մարդը մեռնում է, արևը ձեզ է բախշում, մնում է կնիկը։ Էս կնիկը գիտենում է, որ իր մարդը ոսկով ու արծաթով լիքը մի մեծ քսակ է թողել ու մտքումը մխիթարում է, ասում է. «հէրները մեռաւ, գոնէ աղջիկներս քաղցած չեն մնալ»։ Բայց ինչպէս կարգն ու օրէնքն է՝ մեռելը դեռ հողաւորած — թաղած չեն լինում, որ աղքատի կերպ մտած մի կախարդ գալիս է, իբրև թէ ողորմութիւն է խնդրում, աջողեցնում է՝ քսակը ձեռք է գցում ու ծլկում էնպէս, որ չեն կարողանում իմանան, թէ որ կողմից եկաւ. ու որ կողմը չքացաւ։

Էսպէս խեղճ կնիկը երեք որբ աղջկանով աղքատանում է ու, ճարը կտրած, օր ու գիշեր է անում, աշխատում, որ կարողանայ իր երեխանցը պահի, մեծացնի։

Ժամանակ է անցկենում, էս աղջիկները մեծանում են ու մի օր էլ մեծ աղջիկն ասում է.

—Այ մէր, ես ես է մեծացել, մեծ աղջիկ եմ դարձել, ամօթ է ինձ համար էսպէս անբան ու անգործ տանը նստեմ։ Մի բաղարջ թխիւր առւր ինձ, դնամ աշխարհքէ աշխարհք ման գամ, իմ բախտը գտնեմ։

Մէրը բերում է մի բաղարջ է թխում ու աղջկանը հարցնում, թէ ի՞նչպէս է ուզում. կէս բաղարջն է ուզում՝ մօր օրհնանքը հետը, թէ՛ ամբողջն է ուզում՝ առանց մօր օրհնանքի։ Աղջիկը ամբողջ բաղարջն է ուզում՝ առանց մօր օրհնանքի։

Բաղարջն առնում է ճամփայ ընկնում։ Ասում է. «Մի տա-

րուց ու մի օրից ետը թէ եկայ — եկայ, թէ հօ չեկայ, իմացէք, որ ողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ»։

Գնում է, գնում է, դուրս է գալիս մի անծանօթ երկիր։ Մի ճամփի վրայ մի տնակ է լինում։

Էս տնակին մօտենում է, տեսնում է շէմքումը նստած մի պառաւ-զառամ կախարդ կնիկ։ Էս կախարդը հարցնում է՝ թէ ո՞ր ես գնում։ Թէ՛ թէ գնում եմ բախտս գտնելու։



Աղջիկն իձի վրա քար է նետում։

—Ինձ էլ հէնց էգպէս մի ծառայող է հարկաւոր, արի ինձ մօտ մնայ, առաջարկում է կախարդը։

—Որ քեզ մօտ մնամ՝ ի՞նչ պէտք է անեմ։

—Պէտք է ձեռիս ջուր ածես, սրբես, շորերս հազցնես, աւլես, վառարան վառես, բայց վայն եկել է քեզ տարել, եթէ ծխնելուզի մէջը նայել ես:

Աղջիկն ասում է՝ համաձայն եմ:

Առաւօտը կախարդը որ վեր է կենում, էս աղջիկը ձեռին ջուր է ածում, շորերը չազցնում, կախարդի դուրս գնալուց յետոյ էլ վառարանը սրբում է, բայց սրբելիս մտքովն անց է կենում, թէ՛ ինչ պէտք է լինի, մի մեծ բան հօ չի լինելու, եթէ մի աչքի պոչով ծխնելուզի մէջը նայեմ: Նայում է, ի՛նչ է տեսնում. տեսնում է իր մօրից գողացած ոսկով ու արծաթով լիքը քսակը հրէս ծխնելուզի մէջը կախ արած: Իսկոյն հանում է, ուսը դցում ու թռչում դէպի տուն:

Ճամբին մի ձի է պատահում, առաջը կտրում է ու խնդրում, ասում է.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՛նչ կրլինի ինձ քորես. էս օխտը տարի է ոչով ինձ քորել չի:

Աղջիկը ձեռի փետով ձիուն տալիս է, ճամփիցը դէնն է անում ու անց կենում գնում:

Առաջն է գալիս մի ոչխար: Ասում է.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՛նչ կրլինի ինձ խուզես. էս օխտը տարի է ոչով ինձ խուզել չի:

Աղջիկը սրան էլ է զարկում, ճամփիցը դէնն անում ու անց կենում,

Մի քիչ էլ գնում է, տեսնում է մի օրիգած էծ: Էս օրիգած էծն աղաչում է, ասում է.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՛նչ կրլինի ինձ տեղփող անես: Էս օխտը տարի է ինձ տեղփոխ չեն արել:

Աղջիկն իծի վրա բար է շարտում ու իր ճամփէն շարունակում:

Գնում է պատահում մի խափան ջաղացի: Էս խափան ջաղացը խնդրում է, ասում է.


—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՛նչ կը լինի բան գցես ինձ. էս օխտը տարի է խափան եմ, ոչով ինձ բան չի գցում:

Աղջիկը սրան էլ չի լսում, ներս է մտնում, դռն ետևը ձգում քնում:

Կախարդը վերադառնում է տուն, տեսնում է աղջիկը փախել է: Ակն է տալի ծխնելուզին, տեսնում է էնտեղ էլ քսակը չը կայ: Կատաղում է, ընկնում է աղջկայ ետևից:

Ճամփին պատահում է ձիուն:

—Ա՛յ ձի, ասում է, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդեօք չե՞ս տեսել:



Ա՛յ ձի, իմ աղախնին արդեօք չե՞ս տեսել:

—Չէնց նոր էստեղից փախած անց կացաւ,—պատասխանում է ձին:

կախարդը վազում է: Պատահում է ոչխարը:

—Ա՛յ ոչխար, ասում է, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդեօք չե՞ս տեսել:

—Տեսել եմ, — պատասխանում է ոչխարը: — Մի քիչ առաջ դէսը վազելով անց կացաւ:


Գնում է, պատահում է իծին:

—Ա՛յ էծ, ասում է, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդեօք չե՞ս տեսել:

—Ի՞նչպէս չէ, տեսել եմ, — պատասխանում է էծը: — Հէնց նոր դէսը անցկացաւ, դէպի էն խափան ջաղացը:

Գնում է խափան ջաղացի մօտ:

—Ա՛յ խափան ջաղաց, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռքին իմ աղախնին արդեօք չե՞ս տեսել:



Ջարկում է քնած աղջկանը, դարձնում է քար:

—Ի՞նչպէս չեմ տեսել. ներս արի, հրէս իմ դռան ետևը քնած է, — պատասխանում է խափան ջաղացը:

Կախարդը ներս է մտնում, տեսնում է աղջիկը հրէս՝ քը-

սակը գլխի տակին՝ դռան ետևը քնած: Ձեռքի կախարդական գաւազանով դարկում է քնած աղջկանը՝ դարձնում է քար, իր ոսկով ու արծաթով լիքը քսակն առնում, ետ գնում իր տունը:

Սրա վրայ մի տարին ու մի օրն անց է կենում. միջնակ աղջիկը տեսնում է որ քոյրը ետ չեկաւ՝ մօրն ասում է.

—Ինչպէս երևում է, քոյրս բախտաւորւել է ու լաւ է ապրում. ամօթ չի՞, որ հէնց ես տանը նստեմ պարապ սարապ: Մի բաղարձ թխիր տուր ինձ, գնամ աշխարհէ աշխարհ ման գամ՝ իմ բախտը գտնեմ:

Մէրը հարցնում է, թէ ո՞րն ես ուզում. բաղարձի կէսն ես ուզում իմ օրհնանքի հետ, թէ՞ ամբողջ բաղարձն ես ուզում՝ առանց իմ օրհնանքի:

—Ամբողջ բաղարձն եմ ուզում՝ առանց քո օրհնանքի, — պատասխանում է աղջիկը, ամբողջ բաղարձն առնում է ու ճանփայ ընկնում. ասում է.

—Մի տարուց ու մի օրից ետը թէ եկայ—եկայ, թէ հօ չեկայ, իմացէք, որ ողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ:

Գնում է: Սա էլ մեծ քրոջ նման է վարւում ու նրա բախտին է արժանանում:

Մի տարին ու մի օրն անց են կենում—ետ չի գալիս: Փոքր աղջիկն ասում է.

—Իմ քոյրերը արդէն հասան իրենց մուրազին. միթէ հէնց ես պէտք է մնամ էսպէս անբան ու անգործ նստած, անպէտք ինձ համար էլ, ուրիշների համար էլ: Մի բաղարձ թխիր, մայրիկ, ես էլ գնամ իմ բախտի ետևից ման գամ:

Մէրը հարցնում է, թէ ո՞րն ես ուզում. կէս բաղարձն ես ուզում իմ օրհնանքի հետ, թէ՞ ամբողջ բաղարձն՝ առանց իմ օրհնանքի:

Փոքր աղջիկը թէ՛ կէս բաղարձն եմ ուզում, քո օրհնանքը հետը:



Մէրը կէս բաղարճը տալիս է իրեն, օրհնում ու ճանապարհ դնում:

Իր քոյրերի նման սա էլ երկար դէս ու դէն թափառելուց ետը գալիս է հասնում կախարդի կացարանին ու աղախին է մտնում նրա մօտ: Ու հէնց նրանց պէս սա էլ մի օր ծխնելոյղի մէջ նկատում է ոսկով ու արծաթով լիքը քրտակը, առնում է ու դուրս պրծնում դէպի իրենց տունը:

Ճամփին պատահում է ձիուն: Ձիւն աղաչում է.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ասում է. ինչ կը լինի ինձ քորես, օխտը տարի է ինձ քորել չեն:

—Վա՛յ, խեղճ ձի.—ասում է աղջիկը. քսակը մի կողմն է դնում ու քորիչով քորում է ձիուն:

Մի քիչ անց է կենում, ոչխարն է խնդրում.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ինչ կը լինի ինձ խուզես. էս օխտը տարի է ինձ խուզել չեն:

—Վա՛յ, խեղճ ոչխար,—ասում է աղջիկը, հանում է մըկը րատն ու խուզում է ոչխարին:

Մի քիչ էլ գնում է, օրիգած էծն է կանչում.

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ինչ կը լինի տեղփոխ անես ինձ. էս օխտը տարի է մի տեղ օրիգած եմ, ոչ ով ինձ տեղփոխ չի անում:

—Վա՛յ, խեղճ էծ—ասում է աղջիկը ու տեղփոխ է անում սոված իծին:

Վերջը հասնում է խափան ջաղացին:

—Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ինչ կը լինի բան գցես ինձ, խընդրում է խափան ջաղացը.—էս օխտը տարի է էսպէս կանգնած եմ, ոչով բան չի գցում ինձ:

—Վա՛յ, խեղճ ջաղաց, կանչում է աղջիկը, ջուրը բաց է թողնում ու ջաղացը գռռում է:

Եւ որովհետեւ օրը հատել էր, մութն ընկնում էր, մըտնում է ջաղացն ու դռան ետը պառկում քնում:

Կախարդը վերադառնում է տուն, տեսնում է՝ աղջիկը չըկայ: Ծխնելոյղին ակն է տալիս, տեսնում է քսակն էլ չը

կայ: Կատաղում, փրփրում է, ընկնում է աղջկայ ետեից: Հասնում է ձիուն, ձիուն հարցնում է.

—Ա՛յ ձի, ասում է, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռքին իմ աղախինն չե՞ս տեսել:

—Դու էլ հէնց իմանում ես՝ ես էլ բան ու գործ չունեմ—բան ու գործս էն է, որ քո աղախիններին հսկեմ,—պատասխանում է ձին:—Ես ի՞նչ գիտեմ, սրտեղ է քո աղախինը. գընա, ման արի գտիր:



Ուրախանում աշխարհքով մին է լինում:

Գնում է հերթով հասնում է ոչխարին, իծին, նրանք էլ նոյն պատասխանն են տալիս: Վերջը հասնում է ջաղացին:

—Ա՛յ ջաղաց, ասում է, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռքին իմ աղախինն չե՞ս տեսել:

—Ի՞նչ ես ասում, էս գոռոցի մէջ լաւ չեմ լսում,—պատասխանում է ջաղացը.—մօտիկ արի, ականջումս ասա:

Կախարդը մօտենում է ջաղացին, որ ջաղացի ականջումն ասի, ջաղացը նրան բռնում է, պտըտում, կոլորում, տակոփ

անում, շինում ալիւր-աղցան ու շաւրտում, ցրւում դէս ու դէն:

Կախարդը վէր ընկնելիս ձեռքի գաւազանը վէր գցած է լինում: Ջաղացը աղջկանն ասում է՝ «Էդ գաւազանը վերցըր՝ ո՛ւր, դրանով զարկիր դռան տակի երկու քարին»: Աղջիկը կախարդական գաւազանով զարկում է դռան տակի երկու քարին, մին էլ տեսնում՝ է առաջը կանգնեցին իր երկու կորած քոյրերը: Փաթաթւում են իրար, համբուրւում ու ոսկով, արծաթով լիքը քսակն առնում, ճամփայ ընկնում դէպի տուն, իրենց պառաւ մօր մօտ:

Տանը պառաւ մէրը իր աղջիկներին կորած է համարում ու նստած սուգ անելիս է լինում, որ յանկարծ ներս են մտնում երեքն էլ, ողջ ու առողջ, հետներն էլ ոսկով ու արծաթով լիքը քսակը. ուրախանում, աշխարհքով մին է լինում ու էն օրւանից ապրում են ուրախ ու ապահով:



ՈՐՈՏ ԹԱԳԱՒՈՐԸ

Ժամանակով մի թագաւոր է լինում, էնքան ուժեղ, էնքան բարձր ձէն է ունենում, որ հազար վերստի վրայ լսում է: Մէկի հետ, հէնց էնպէս, զրուց անելիս՝ հեռից կարծում են թէ որոտն է թնդում: Դրա համար էլ անունը դնում են Որոտ թագաւոր:

Պալատականներն ու նախարարները, որոնք ամեն օր խօսելիս են լինում թագաւորի հետ, կարճ ժամանակում ամենքն էլ խլանում են: Եւ կատարեալ պատիժ ու պատուհաս է դառնում երկրի համար: Ժողովուրդը ամեն կողմից գալիս է արդարադատութիւն գտնելու, գալիս են խեղճերը, էնքան կանչում, էնքան գոռում, որ ուժից ընկնում են, բայց խուլ պալատականներն ու նախարարները չեն լսում: Տէրութեան մէջ գործերն առաջ չեն գնում. մարդիկ տրտնջում են, և ոչ ոք չի համարձակւում թագաւորին ասի.

—Ձերդ մեծութիւն, դուք խլացրել էք բոլոր նախարարներին:

Թագաւորին թւում էր, թէ ինքն էլ էնպէս է խօսում, ինչպէս միւսները: Եւ երբ խլացած նախարարները մինչև անգամ իրեն ձէնն էլ չեն լսում, բարկանում է, քացով ու բռնուկով էնպէս է դուրս քշում պալատից, որ գլուխկոնձի տալով սանդուխդներից գլորւում են:

Նախարարները քանի որ նոր են լինում՝ առաջին օրերը գործերը լաւ են գնում: Միայն թագաւորը նկատում է, որ իր խօսելու ժամանակ նրանք ձեռքերով իրենց ականջները փակում են:

—Ի՞նչ էք անում,—հարցնում է նեղացած.—ես գզրի պէս հօ չեմ գոռում:

—Օ՛, ո՛չ, ձերդ մեծութիւն, պատասխանում են վախեցած նախարարները:—Ականջներիս... ետէն ուռել է:

Եւ բոլոր նոր նախարարների ականջների ետէն ուռած է լինում: Թագաւորն էլ առանձնապէս անհանգիստ չի լինում. գիտեսնում է, որ էդ սովորական ու անվտանգ հիւանդութիւն է: Միայն վերջը հրամայում է, որ ամեն մինը, ով պատրաստում է նախարար դառնալու, առաջուց իր ականջի ուռուցքը բժշկի:

Խեղճերը բժշկւում են պալատական բժիշկների մօտ, ամեն տեսակ դեղ ու դարման դնում են իրենց առողջ ականջներին ու, նամուսից խեղդւած, տանում ամեն ցաւ ու տանջանք:

Թագաւորն էլ մին մին գալիս է նրանց տեսութեան, իբրեւ հիւանդների, և առողջութիւնները հարցնելիս կարծելով որ ականջի ուռուցքից լաւ չեն լսիլ, ձէնը աւելի է բարձրացնում.

—Հէյ, ո՞նց է՞ք... ո՞նց...

Ձէնից պատերն ու օձորքը դողում են:

—Լաւ ենք, ձերդ մեծութիւն. շատ լաւ ենք:

Թագաւորը երեակայում է, որ իր թագաւորութեան մէջ գործերը հիանալի են գնում: Ոչ ոք նրան չի ներկայանում, ոչ ոք մօտը գանգատի չի գալիս, ամենքն էլ խլանալուց վախենում են և մի կերպ համբերում են:

Բայց մի անգամ մի գիւղացի է գալիս պալատը ու ներկայանում թագաւորին: Թագաւորը տեսնում է սրա երկու ականջն էլ խցան է կոխած—զարմանում է:

—Էդ ի՞նչ կը նշանակի, ինչո՞ւ ես ականջներդ խցան կոխել, հարցնում է գիւղացուն:

—Ի՞նչ անեմ, թագաւորն ապրած կենայ,—պատասխանում է գիւղացին.—դու էնպէս բարձր ձէն ունես, որ խօսե-

լիս, քո ձէնիցը մարդիկ խլանում են: Ամպի նման որոտում ես, նրա համար էլ անունդ դրել են Որոտ Թագաւոր:

Թագաւորն սկզբում սաստիկ վրդովւում է: Հաւատալը չի գալիս, թէ ինքը կարող էր էդ տեսակ զարհուրելի ձէն ունենալ: Բայց երբ ամեն բան պարզւում է իր համար ու համոզւում է, բարկանում է իր նախարարների վրայ, հրամայում է նրանց ամենքի ձեռն ու ոտն էլ կապտել ու բանտարկել, իսկ գիւղացուն շինում է իր գլխաւոր ու միակ խորհրդատուն: Միայն իրաւունք է տալիս, որ ականջները խցանով փակի:

Դու մի ասիլ թագաւորը վաղուց ցանկութիւն է ունեցել տմուսնանայ ու շատ էլ խնամախօսներ է դրկել էս ու էն թագաւորի աղջկանն ուղելու, բայց ամենքն էլ մերժել են: Հիմի նոր է գլխի ընկնում, թէ ինչո՞ւ են մերժել իրեն.—վախեցել են թէ խլանան:

Վճռում է յայտարարի իր տէրութեան մէջ, թէ ո՞վ է կարող իրեն բժշկի, և տեղն ու տեղը, ինչքան ձէնումը ձէն կայ՝ գոռում է.

—Հէյ, ո՞վ է կարող ինձ բժշկի. ով բժշկի՝ իր քաշովը մին ոսկի կը տամ:

Ձէնը որոտալով ու դրմբդրմբալով գնում է հասնում ամեն կողմի վրայ հազար վերստ: Էս զորդոցից ամպերը ժաժեն գալի, տակն ու վրայ են լինում և երկու շաբաթ շարունակ ամբողջ տէրութեան վրայ անձրեւ է գալի: Ամենահեռաւոր անկիւններում էլ իմանում են թագաւորի յայտարարութիւնը, բայց ամիսներ են անց կենում ու ոչ մի բժիշկ, ոչ մի հէքիմ չի երևում:

Խեղճ թագաւորն սկսում է յուսահատւել. հէնց էդ միջոցին հեռու աշխարհքից յայտնւում է մի կախարդ, ներկայանում է թագաւորին, ասում է.

—Թագաւորն ապրած կենայ, մի կախարդական մագ ունես գլխիդ, էն կախարդական մագն է քո հիւանդութեան պատճառը:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում: Շինչ մեծ բան է, ասում է իր մտքումը, գլուխս վեր կանեմ — պրծանք գնաց: Էս լաւ էր, էս հէքիմին էլ մի բան կը տամ կը գնայ: Էլ ինչո՞ւ եմ իրեն քաշովը մին ոսկի տալի. մի բան որ առաջուց ցաւիս գաղտնիքը յայտնեց:»

Հէնց էստեղ հէքիմն աւելացնում է.

— Միայն մի պայման կայ, որ պէտք է իմանաս, թագաւոր: Պէտք է մի անգամից գտնել ու պոկել էն կախարդւած մագը: Եթէ մին սխալեցիր — նրանից ետեւ էլ ճար ու հնար չի լինի քո ցաւին: Եւ միակ մարդը, որ կարող է էդ անել — Անլեզու աղջիկն է:

— Իսկ նա հրաւել է, հարցնում է թագաւորը:

— Նա ապրում է Աճուճ Պաճուճների աշխարհքում: Նրան ասում են անլեզու, որովհետեւ ճշմարիտ էլ — լեզու չունի: Էս օրւան օրից ուղիղ մի տարի, մի ամիս ու մի օր անց՝ դու նրան կը տեսնես էստեղ, եթէ քո տւած խօսքը կատարես, իմ քաշովը մին ոսկին տաս ինձ, քո խորհրդականին էլ, իբրեւ դեսպան, ինձ հետ միասին ուղարկես Անլեզու աղջկայ մօտ:

Թագաւորը թէն իր մէջը շատ է ցաւում, բայց ի՞նչ անէր ճար չունէր, անծանօթ հէքիմին քաշովը մին ոսկի է տալիս ու իր խորհրդականի հետ միասին ճանապարհ է դնում դէպի Աճուճ Պաճուճների երկիրը — Անլեզու աղջկայ մօտ:

Էս դէպքից մի քանի ամիս անց է կենում. թագաւորը մին էլ տեսնում է իր խորհրդականը ետ եկաւ: Հապա կախարդ հէքիմն ու Անլեզու աղջիկն ուր են: Թէ՛ կախարդ հէքիմը ոտով գլխով անհետացաւ, կորաւ, իսկ Անլեզու աղջկանից տեղեկութիւն չունիմ: Ասում են՝ գնացել է իրեն համար արհեստական լեզու շինել տայ, ո՞ւր, ո՞ւմ մօտ կամ քանի ժամանակով, ոչով չը գիտի: Միայն կախարդը անհետանալիս էսպէս կանչեց.


— Որոնեցէք — կը գտնէք: Սրա մէջն է թագաւորի բախտաւորութիւնը:

— Լաւ, մենք էլ կորոնենք, ասում է թագաւորը:

Եւ առանց գործը ետ գցելու դուրս է գալիս իր պալատի պատշգամբն ու նորից բարձր գոռում.

— Հէյ, ո՞վ կարայ գտնի Անլեզու աղջկանը: Ո՞վ գտնի, իր քաշովը մին ոսկի կը տամ:

Կարծես թէ ճիշտ որ ամպ է որոտում: Ձէնը մինչև որ տեղ հասնում է՝ ամեն տեղ էլ շաբաթներով անձրև է գալի:




Սրանից ետը էլ մի քանի ամիս անց է կենում — դարձեալ Անլեզու աղջկանից ոչ մի լուր:

Թագաւորն սկսում է յուսահատուել: Եւ փոխանակ լուր իրեն համար նստելու, ամբողջ օրը ամպի նման որոտում է ու որոտում: Հպատակների մի մասի ականջները ծանրանում են, միւս մասը բոլորովին խլանում են: Եւ որովհետեւ ոմանք վատ են լսում, ոմանք բոլորովին չեն լսում, սրանից հազար ու մի թիւրիմացութիւններ են առաջ գալիս, իսկ թիւրիմացութիւններից զանազան տուր ու դմփոցներ են պատահում: Ոստիկանութիւնը միանգամայն գլուխը կորցնում է, հայ դէս

է վազում, հայ դէն է վազում: Եւ որովհետեւ, թագաւորին մօտ լինելով, տէրութեան մէջ ամենախուլ մարդիկն էլ ոստիկաններն էին, ճշմարտութիւնը չեն կարողանում լսել, միշտ մեղաւորները կողմն են պահում ու արդարներին բռնում, բանտերն են լցնում:

Թագաւորը քանի գոռում է՝

—Արդարադատ եղէք, արդարադատ եղէք—էնքան աւելի ու աւելի են նրանք խլանում ու աւելի մեծ անիրաւութիւններ են անում:



Մի անգամ թագաւորի պալատի առջև կանգ է առնում մի ջահէլ անծանօթ ու գոռում է.

—Ձէնի դեղ եմ ծախում, ձէնի դեղ եմ ծախում: Ով ձէն ունի—կը կտրի, ով չունի—կը գտնի: Այ ձէնի դեղ, այ լաւ ձէնի դեղ...

Որոտ թագաւորը որ լսում է, կարծում է թէ իրեն ծաղրում են, հրամայում է բռնեն մօտը բերեն էն լրբին:

Երբ բռնում են, ներս են բերում պալատը՝ բարկացած որոտում է.

—Էդ ի՞նչ էիր գոռում դու իմ պալատի առջև: Ի՞նչ ձէնի դեղ ես ծախում... Տոյց տուր հապա՛ տեսնեմ ո՞րն է քո ձէնի դեղը...

—Ահա իմ ձէնի դեղը, թագաւորն ապրած կենայ: Համեցէք փորձիր, տես՝ ճշմարիտ եմ ասում թէ չէ:

Ասում է անծանօթն ու իր արկղից մի տեսակ մանր հաբեր է հանում դնում թագաւորի սեղանի վրայ:

Թագաւորը նայում է սրան, ոտից-գլուխ չափում: Շորերին է նայում—տղայ է, բայց դէմքը, շարժումները, ձէնն ու քնքշութիւնը միանգամայն կանացի են:

—Անունդ ի՞նչ է:

—Անունս Անլեզու է: Ի հարկէ, տեսնում ես, թագաւոր, որ մի քիչ սխալ անուն են տւել ինձ: Գուցէ աւելի պատշաճ էր, որ երկար լեզւանի կոչէին, բայց եղածը եղած է...

Եւ առանց քաշելու, որ ինքը գտնւում է ոչ թէ փողոցում, այլ թագաւորի պալատում, սկսում է կոկորդովը մին գոռալ.

—Այ ձէնի դեղ, լաւ ձէնի դեղ. ով ունի—կը կտրի, ով չունի—կը գտնի...

Թագաւորի ծիծաղը պրծնում է:

—Հապա, ասում է, էդ քո ձէնի դեղը բեր մի փորձեմ տեսնեմ:

Առնում է մինը կուլ տալի, և, ով զարմանք, ձէնի կէսը կորչում է. Սրանից ետը թէ կարող ես, դէ բռնի Որոտ թագաւորին: Ոնց որ սոված հաւը կուտին վրա ընկնի, վրա է ընկնում էս հաբերին ու կուլ է տալիս իրար ետեից: Կուլ է տալիս վերջացնում: Ետ է դառնում որ մի բան ասի, չորս կողմի կանգնածները ձէնը չեն լսում, էնքան կտրած է լի

նում: Ձեռն կարողանում լսել, մինչև ականջները բերնին չեն մօտեցնում:

Թագաւորը ուրախութիւնից հրամայում է, որ իր ամբողջ տէրութեան մէջ տօն կատարեն, խաղեր ու հրավառութիւններ սարքեն, ուտելիքներ ու գինի բաժանեն ժողովրդին:

— Իսկ դու ի՞նչ ես ուզում, հրաշալի անձանօթ, դիմում է Թագաւորը իրեն բժշկող երիտասարդին: Ինչ որ ուզես, պէտք է ստանաս, թէկուզ թագաւորութեանս կէսը:

— Ես է՛ն եմ ուզում, որ քո պալատում մի սենեակ տաս ինձ և հաց ու ջուր, որ ապրեմ, ոչով էլ ինձ մօտ չը մտնի, նոյն իսկ դու, թագաւոր: Ահա իմ բոլոր ուզածը:

— Էդքանը, զարմանում է Թագաւորը: Շատ քիչ է: Բայց թող էդպէս լինի, ինչպէս ուզում ես:

Սրանից յետոյ էլ Թագաւորի ձէնը էնքան է նւագում, որ պալատականները չեն կարողանում լսել, մանաւանդ որ խուլ են լինում: Հետզհետէ նրանց ականջներն էլ բժշկւում են, և ամենքն էլ սկսում են խօսել էնպէս, ինչպէս Թագաւորն է խօսում—հազիւ լսելի շշուկով, և կարճ միջոցում էս տէրութեան մէջ շշուկը դառնում է խօսելու ընդունւած ձևը:

Մենակ Թագաւորի պալատում ապրող անձանօթն էր, որ հեշտ էր լսում Թագաւորին ու մենակ նա էր, որ չէր շշնջում, չէր իջեցնում իր հնչուն ձէնը խօսելու ժամանակ, ում հետ էլ լինէր:

Ժողովուրդն սկսում է հետաքրքրւել, թէ արդեօք նրա լեզուն էլ իրենց լեզւի նման լեզու է, թէ չէ: Էս հետաքրքրութիւնը մեծանում է մանաւանդ մի դէպքից յետոյ, երբ մինը կատակով անձանօթին խնդրում է, թէ՛

— Հապա մի քու լեզուն ցոյց տուր, տեսնենք ընչից է շինած:

Էս ասելն է լինում: Անձանօթը բարկանում է. լաց է լինում, փախչում է ու մտնում իր սենեակը, փակւում ու յայտ-

նում, թէ էլ երբէք դուրս չի գալ, որ միւս անգամ էլ չասեն թէ լեզուդ ցոյց տուր:

Էս դէպքի մասին տեղեկացնում եմ նախարարին: Նախարարը գնում է անձանօթի մօտ, ասում է.

— Ինչո՞ւ ես բարկանում, ինչո՞ւ ես էդպէս անում: Ուզում են լեզուդ տեսնեն՝ դու էլ հանիւր ցոյց տուր. ահա էսպէս.

Ու լեզուն հանում է:

Անձանօթը ակամայից կրկնում է նոյն բանը. յանկարծ լեզուն բերանից վէր է ընկնում, կտոր կտոր լինում, ջարդւում, ոնց որ կաւից լինէր շինած:

Նախարարը զարմանքից մի առժամանակ մնում է տեղը քար կտրած: Ապա ուշքի գալով ձեռքով զարկում է ճակատին ու զլխապատառ վազում է Թագաւորի մօտ:

— Թագաւորն ապրած կենայ, բա չէ՞ս ասիլ՝ որ Անլեզու աղջիկը յայտնւել է: Հէնց էսօր լրանում է մի տարին, մի ամիսն ու մի օրը, որ գուշակեց կախարդ հէքիմը, նա յայտնւել է:

Պալատը տակն ու վրայ է լինում: Մարդիկ խռնւում են Անլեզու աղջկայ սենեակի դռան առջև, ուզում են անպատճառ ներս մտնեն ու տեսնեն իրենց աչքով: Ձուր է Թագաւորը կանչում.

— Ձի կարելի մտնել նրա մօտ: Մինչև անգամ ես էլ չեմ կարող, խօսք եմ տւել...

Բայց հիմի էլ ո՞վ էր կարողանում լսել Թագաւորի ձէնը: Տեսնում են, ոնց է շրթունքները շարժւում, ձեռին-ոտին անում, իսկ թէ ինչ է ասում, չեն իմանում:

Էստեղ յանկարծ դռները բացւում են ու ամենքը մնում են հիացած: Մենեակի մէջտեղը, մարգարտակար ու գոհարազարդ զգեստով, ճոխ մազերն արձակ, ոսկու դէզի վրա հանգիստ թիակը տւած մի ջահէլ գեղեցկուհի, հովհարը ձեռին իրեն հով է անում:

Ոսկու դէզը նոյն մեծութեան, ինչ որ Թագաւորը տւել էր կախարդ հէքիմին:

Թագաւորն ընկնում է գեղեցկուհու ոտքերը ու գլուխը խոհնաբնուած ծնկներին: Գեղեցկուհին Թագաւորի գլխից հանում է կախարդական մազը, որ հանելու պէս էլուում է մատների մէջ:

—Շնորհակալ եմ, անուշ աղջիկ: Շնորհակալ եմ, իմ թագուհի, կանչում է թագաւորը մի էնտեսակ դուրեկան ձէնով, որ մինչև էն օր ոչով չէր լսած կեանքում:



—Ես էլ եմ շնորհակալ, Որոտ Թագաւոր, իմ անդին ամուսին, պատասխանում է աղջիկը:

Եւ հէնց որ թագաւորը բժշկուում է, նոյն րոպէին ընկ-
նում է և էն կախարդանքը, որ գեղեցիկ աղջկանը զրկել էր
լեզւից: Եւ ամեն բան կատարւում է հնպէս, ինչպէս գուշա-
կած է լինում Անլեզու աղջկանը արհեստական լեզու
կախարդը:

Էստեղ մէջ է մտնում Թագաւորի խորհրդական — երբեմնի
գիւղացին: Ասում է.

—Ահա էս էր ձեր ճակատագիրը: Դուք պէտք է ամուսիններ դառնայիք ու սիրով կապուեիք:

Այժմ ժամանակ է, որ ես հեռանամ...

—25... ինչո՞ւ... ինչո՞ւ... — Կանչում է թագաւորը:

Բայց չընայելով թագաւորի կանչելուն, խորհրդականը դառնում է մի պատիւիկ կայտառ թրզուկ, թռչում ընկնում է ոսկու դէզի մէջն ու անհետանում:

Բանից զուրս է գալիս, որ նա էլ կախարդների օգնականն է եղել:

Ուրախ ու գոհ Որոտ Թագաւորն ու գեղեցիկ աղջիկը մեծ հարսանիք են սարքում, ամուսանանում են իրար հետ: Թագաւորը ներում է իր նախարարներին ու վերագարձնում է իրենց նախկին պաշտօնները:

Ամենքն էլ ուրախանում են, մանաւանդ էլ խլանալու
Վտանգ չրկար: Թէև մարդիկ յոյժում էին.

—Մի վախեցնաք, նրանք միշտ էլ խոչը կը մնան:

Կապրենք, կը տեսնենք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0165490

Ընկերութեան հրատարակութիւններ.

1. Լ. Ուօլլէս. Բէն-Հաւր. հ. 1. Թարգմ. անգլ. Փ. Վարդանեան	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Շիրվանդադէ, Սըախար	— 25
4. Մուրացան. Փէրդ Մարգարեաունի, պատմական վէպ	1— 20
5. Շահովսկի. Բնած արքայադուտը, պատկ. հէք. փոխ. Աթ. Խնկոյեան	15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմածքներ	— 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ	1— 20
8. Ն. Բուրակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկինս. Դաւիթ Կոպլէրֆելդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. Թարգմ. Փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 70
12. Շիրվանդադէ. երկերի ժողովածու, հատ. IV	1— 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ.	— 57
14. Ոսկէ Աղջիկը, Թարգմ. Լ. Մելիք-Աղամեան	— 5
15. Ա. Բօզատ. Թարգմ. Ս. Թորոսեան	— 10
16. Ստեփաննոս Նաղաբեանի երկերը, հատոր I	1— 50
17. Սպիտակ տառեղնիկը, փոխ. օր. Ն. Գրիգորեան	— 25
18. Ստ. Տէր-Աւետիքեան. Բուսօնք	— 20
19. Անուշ. Տէր-Ղանդեան, Ուսնի	— 40
20. » » » Ծաղկոց մայր	— 35
21. Գրեմմ եղբայրների Հեքիաթները, պրակ I	— 25
22. » » » II	— 25
23. » » » III	— 25
25. Աւետիս Ահարոնեան, Փորրիկ պատմածքներ	— 25
26. Ռուսական Հէքիաթներ, Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25
27. Օտար Հէքիաթներ, I Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Դարբիէ ԴԱՆՈՆԵԿԻՍ. Ջիւիտեղա. ողբ. 5 ար. Փր. Թրգմ. Ս. Յակոբեան:
2. Իլ. Ճաւճաւածէ. Մուրացեանի պատմածը. վր. Թրգմ. Տ. Փլրումեան:
3. Ա. Ահարոնեան. Ասածու կրակը:
- 4.—5. Իւշիկիշ. Թաղաւոր. ուսու. Թարգմ. Յ. Յովհաննիսեան:
6. Յ. Մալխասեան. Յանցանքը:
7. Սէրի. Ծիլ ու ծաղիկ:
- 8.—9. Կոմս Ա. Կ. Տօլստոյ. Իօանն Ահիլի մահը. ողբ. 5 ար., ուսու. Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
10. Անտօն Զիլով. Պատմածքներ. ուսու. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
- 11.—12. Ա. Ս. Գրիբաեղով, Խնդից պատուհատ. կոմ. չորս գործ. ուսանուորով. Թարգմ. Լ. Մանեկեանի:
13. Լորդ Բալրոն. Մանֆրէդ. անգլ. բնագրից Թարգմ. Տիբալր վարդ.
14. Դի դը-Մալլասան. I Ճարպագունդը, II Զարդը. ֆրանս. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
15. Վալդեան. Բժիշկը. գրամ 3 գործ:
- 16.—17. Կոստ Համուռն. Պան. Լէյաբնանա Թոմաս Դլանի թղթերից. գերմ. Թարգմ. Զ. Բաշակեան:
18. Մարգար. Վէպիկներ:
19. Թերուս կնոջ խոստովանքը, ա. Ն. Աթալեանի:
20. Ֆեօդօր Իօանովիչ արքան, ողբ. 5 ար., Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
- 21, 22, 23. Հերման Զուդերման, Հոգսը, գերմ. Թարգմ. Դ. Ալթաւեան:

ԻԻՐԱՔԱՆՁԻՐ ՀԱՄԱՐԸ 15 Կ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Զարարանատիկ թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան 8
2. Նահապետական տուն, Մովսէս Դուկասեանց 5
3. Գործակատար Մարտիրոսը, Ս. Մ.-Շառնազարեան 7

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.